Հաստատված է
«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2024 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ, արձանագրություն №01-07/24:
Գիտական խորհրդի նախագահ,
ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար

Մ. Գ. Բարսեղյան

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ՝ ՄԻՆՉԵՎ 12 ԿՐԵԴԻՏ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱՀԱՆՁՆՄԱՆ

Երևան 2024թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգով սահմանվում է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) առկա և հեռակա ուսուցման համակարգի ուսանողների՝ մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի մարման կազմակերպման և անցկացման գործընթացները՝ ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թ. դեկտեմբերի 17-ի թիվ 1676-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետի պահանջների:
2. Քննաշրջանից հետո (ներառյալ ակադեմիական պարտքերի վերահանձնման երկու փուլերը)՝ մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերը (քննություն/ստուգարք (կուրսային նախագիծ, կուրսային աշխատանք), այսուհետ՝ քննություն/ստուգարք) վերահանձնելու համար սահմանվում է երկու հնարավորություն, որոնք ուսանողները կարող են օգտագործել մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը:
3. Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքեր վերահանձնելու հնարավորություն է տրվում այն կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո, երբ առաջացել են այդ պարտքերը:
4. Ուսումնական պլանով նախատեսված դասընթացների քննությունները/ստուգարքները կազմակերպվում են Համալսարանի ներքին իրավական ակտերի և տվյալ դասընթացի ծրագրի համաձայն:
5. Համալսարանի ամբիոնները ուսանողների համար կազմակերպում են համապատասխան դասընթացից խորհրդատվություններ, որի անցկացման ժամանակացույցը հաստատում է ամբիոնի վարիչը:
6. Լրացուցիչ խորհրդատվությունների, քննությունների և գործընթացի կազմակերպման համար աշխատողների վարձատրությունը իրականացվում է ռեկտորի հրամանով:

II. ՄԻՆՉԵՎ 12 ԿՐԵԴԻՏ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԸ ՎԵՐԱՀԱՆՁՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

7. Դասընթացի քննության/ստուգարքի վերահանձնումը իրականացվում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին ուղղված ուսանողի դիմումի (Ձև 1) համաձայն՝ դասընթացի քննության/ստուգարքի համար սահմանված վճարումը ուսանողի կատարելուց հետո:
8. Ակադեմիական պարտքը վերահանձնելու համար ուսանողը համապատասխան ֆակուլտետի դեկանատում լրացնում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին ուղղված սահմանված ձևի դիմումը ՝ հետևյալ ժամկետներում.
   1) 1-ին կիսամյակում՝ հոկտեմբերի առաջին շաբաթում և/կամ նոյեմբերի առաջին շաբաթում,
   2) 2-րդ կիսամյակում՝ մարտի երկրորդ շաբաթում և /կամ ապրիլի երկրորդ շաբաթում:

9. Սույն ընթացակարգի 13-րդ կետին վերաբերող դիմումների ընդունումը կազմակերպվում է հունիսի առաջին շաբաթում:
10. Ֆակուլտետի դեկանի թույլտվությունը ստանալուց հետո ուսանողի դիմումը և վճարման անդորրագիրը դեկանատը ներկայացնում ընդհանուր բաժին:
11. Սահմանված ժամանակահատվածի ավարտից հետո ներկայացված դիմումները չեն քննարկվում և քննությունը/ստուգարքը վերահանձնելու թույլտվություն չի տրվում:
12. Դեկանը դիմումների, քննական հանձնաժողովների և քննությունների/ստուգարքների ժամանակացույցի վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված ձևաչափով (Ձև 2) ներկայացնում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին հետևյալ ժամկետներում.
    1) 1-ին կիսամյակում՝ հոկտեմբերի երկրորդ շաբաթում և /կամ նոյեմբերի երկրորդ շաբաթում,
    2) 2-րդ կիսամյակում՝ մարտի երրորդ շաբաթում և /կամ ապրիլի երրորդ շաբաթում:
13. Առկա և հեռակա ուսուցման համակարգերում ուսանողների՝ քննությունները/ստուգարքները վերահանձնելու մասին հրամանների նախագծերը ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնի կողմից մշակվում և ռեկտորի հաստատմանն են ներկայացվում հետևյալ ժամկետներում.
    1) 1-ին կիսամյակում՝ հոկտեմբերի երրորդ շաբաթում և /կամ նոյեմբերի երրորդ շաբաթում,
    2) 2-րդ կիսամյակում՝ մարտի չորրորդ շաբաթում և /կամ ապրիլի չորրորդ շաբաթում:
14. Քննությունների/ստուգարքների վերահանձնումը կազմակերպվում են հետևյալ ժամկետներում.
    1) 1-ին կիսամյակում՝ հոկտեմբերի չորրորդ շաբաթում և /կամ նոյեմբերի չորրորդ շաբաթում,
    3) 2-րդ կիսամյակում՝ ապրիլի առաջին շաբաթում և /կամ մայիսի առաջին շաբաթում:
15. Վերահանձնման մեկ փորձ կատարած բակալավրի առկա ուսուցման 3-րդ կուրսի, հեռակա ուսուցման 4-րդ կուրսի, մագիստրատուրայի առկա ուսուցման 1-ին կուրսի (բացառությամբ մեկ տարի տևողությամբ կրթական ծրագրերի), մագիստրատուրայի հեռակա ուսուցման 1-ին կուրսի (մեկ ու կես կամ երկու տարի տևողությամբ կրթական ծրագրերի դեպքում) և 2-րդ կուրսի (երկուս ու կես տարի տևողությամբ կրթական ծրագրերի դեպքում) մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտք ունեցող ուսանողների քննությունների/ստուգարքների վերահանձնման 2-րդ փորձը կազմակերպվում է համապատասխանաբար նշված կուրսի 2-րդ կիսամյակի քննաշրջանի 1-ին լուծարքային շրջանում, որի ընթացքում թույլատրվում է հանձնել ընդամենը մեկ դասընթաց:
16. Տվյալ դասընթացի քննության/ստուգարքի երկրորդ վերահանձնումը իրականացվում է սույն ընթացակարգի պահանջներին համապատասխան:

17. Ակադեմիական պարտքերի վերահանձնման քննություններն/ստուգարքներն անցկացվում են 12-րդ կետով սահմանված ժամկետներում՝ դեկանի կողմից տրված ակադեմիական պարտքի տեղեկագրի հիման վրա: Վերահանձնման քննություններն/ստուգարքներն անցկացվում են դասերից հետո:
18. Ամբիոնները ձևավորում են պրոֆեսորադասախոսական կազմի երեք անդամից բաղկացած քննական հանձնաժողովներ, որոնք գործում են տվյալ ուսումնական տարում:
19. Վերահանձնման արդյունքները ֆակուլտետի դեկանատի կողմից ներկայացվում է Համալսարանի ուսումնական գործընթացի կազմակերպման բաժին՝ քննությունների ավարտից հետո 2 օրվա ընթացքում:
20. Վերահանձնման դիմում ներկայացրած, սակայն ակադեմիական պարտքի վերահանձնմանը հարգելի պատճառով չներկայացած ուսանողը պարտավոր է չմասնակցելու պատճառների մասին փաստաթղթային հիմքերը ներկայացնել ֆակուլտետի դեկանատ: Հարգելի համարվելու դեպքում ուսանողը նույն վճարման անդորրագրով կարող է մասնակցել վերահանձնման հաջորդ ժամկետում:
21. Վերահանձնման դիմում ներկայացրած, սակայն ակադեմիական պարտքի վերահանձնմանը անհարգելի պատճառով չմասնակցած կամ մասնակցած, սակայն անբավարար գնահատված ուսանողը վերահանձնման հաջորդ ժամկետներում մասնակցելու համար ներկայացնում է նոր վճարման անդորրագիր:
22. Առանձին դեպքերում սահմանված ժամկետներից դուրս ակադեմիական պարտքերի վերահանձնումը թույլատրվում է ռեկտորատի որոշմամբ՝ համապատասխան հիմնավորման առկայության դեպքում:
23. Մինչև 2023-2024 ուսումնական տարին ձևավորված ակադեմիական պարտքերի վերահանձնումը իրականացվում է անվճար հիմունքներով:

III. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

24. Սույն ընթացակարգը հաստատվում, փոփոխվում և լրացվում է Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ, վավերացվում՝ ռեկտորի ստորագրությամբ:
25. Սույն ընթացակարգը ուժի մեջ է մտնում Համալսարանի գիտական խորհրդի որոշումը ռեկտորի կողմից հաստատելուց հետո՝ 2024 թ. սեպտեմբերի 1-ից:
26. Այն հարցերը, որոնք ներառված չեն սույն ընթացակարգում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

Գիտական քարտուղար՝ **Լ.Հ. Լևոնյան**

10 հուլիսի 2024թ.
Գիտխորհրդի որոշում № 01-07/24